

---

MICHAEL E. STONE. *Apocrypha, Pseudepigrapha and Armenian Studies (Collected Papers)*, vols. 1-2 (Orientalia Lovanensia analecta, 144-145), Leuven - Paris - Dudley, MA, Peeters, 2006, 940 p.

ՄԱՅՔԼ Է. ՍԹՈՆՆԵՆ. Պարականոն, «անվավեր» երկեր և հայագիտական ուսումնասիրություններ (հողվածների ընտրանի), *հ. 1-2 (Լուվենի արևելագիտական մասունքներ, 144-145), Լուվեն-Փարիզ-Դալի (Մասաչուսեթս), «Պետերս» հրատ., 2006, 940 էջ:*

Բելգիական հայտնի “Peeters” հրատարակչության «Լուվենի արևելագիտական մասունքներ» շարքի 144-145-րդ հատորները բովանդակում են Երուսաղեմի Եբրայական համալսարանի Հայագիտական ամբիոնի երկարամյա վարիչ, պրոֆեսոր Մայքլ Սթոունի՝ տարբեր տարիների գրած անգլերեն վաթսուներից ավելի հողվածներ: Հեղինակի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են երկու մեծ բնագավառ՝ «Երկրորդ տաճարի դարաշրջանի»<sup>1</sup> հրեական գրականություն և հայ միջնադարյան գրականություն: Ժողովածուի մեջ ամփոփված նյութը բաշխված է ըստ նշված բնագավառներին վերաբերող հինգ բաժինների. առաջին երկուսը՝ պարականոն ու «անվավեր» գրքերի ուսումնասիրություն՝ ներառյալ դրանց հայերեն թարգմանությունները (առաջին հատոր): Զուտ հայագիտական հողվածներ ընդգրկող երկրորդ հատորը կազմված է երեք բաժնից՝ «Ձեռագրեր ու տպագիր գրքեր», «Բնագրագիտական ուսումնասիրություններ» և «Սուրբ Երկիր. ուխտագնացություններ ու արձանագրություններ»: Ժողովածուի լույս ընծայումը առիթ է հանդիսացել, որպեսզի հեղինակն ավարտի չորս անավարտ հողված և կցելու դրանք մնացած վաթսուներին, որոնք, սկսած 1959 թվականից, տպագրվել են աշխարհի զանազան պարբերականներում (գրախոսվող երկհատորյակում դրանք ներ-

կայացված են նմանահանությամբ): Երեք հողված, որ նախկինում լույս էին տեսել հայերեն և գերմաներեն, հեղինակը ժողովածուի համար թարգմանել է անգլերեն:

Մայքլ Սթոունի հետաքրքրությունների շրջանակի և նրա ուսումնասիրած գիտական տարբեր ոլորտների մասին ընդհանուր պատկերացում տալու համար ուզում ենք ժողովածուի հողվածների նյութերն ու վերնագրերը ներկայացնել փոքր-ինչ մանրամասն՝ կարճ նշելով նաև դրանց բովանդակությունը:

Առաջին հատորը պարունակում է Մեդայ ծովի ձեռագիր փաթույթներին ու Կուրմանի պատմությանը, Ադամի և Եվայի մասին գրականությանը, ինչպես նաև՝ հրեական այլ պարականոն գրքերի նվիրված հողվածներ: Դրանց զգալի մասն առնչվում է հայկական նյութի հետ. օրինակ՝ «Աստվածաշնչյան և հրեական մոտիվների փոխանցումն ու ընկալումը հայկական ավանդույթում» (էջ 79-93), «Հայերեն պարականոն գրքերի ուսումնասիրություն» (էջ 95-104), «Հայերեն պարականոն գրականություն. թարգմանություն և ստեղծագործություն» (էջ 105-137): Հատորում ընդգրկված են նաև հայերեն ինքնուրույն կամ թարգմանական առանձին գրվածքների վերաբերյալ հողվածներ, որոնց թվում՝ «Հովհաննես Թյուրանցու «Վասն ստեղծման աշխարհի» պոեմի հատվածաբար թարգմանություն և մեկնաբանություն» (էջ 147-193), «Հարցումն վերնագրով գրվածքը» (էջ 237-242), «Եզեկիելի հայերեն տեսիլքը» (էջ 295-304), «Հայերեն նորահայտ հրեշտակաբանական և երկնագիտական տեքստեր» (էջ 415-425) և այլն:

Եթե, ինչպես Սթոունն է խոստովանում, հայկական նյութը սկզբնապես նրա համար

---

<sup>1</sup> Մ. թ. ա 538 թվականից (երբ Կյուրոս Բ-ը թույլ տվեց քարոյալ հրեաներին վերադառնալ Երուսաղեմ և վերակառուցել 597-586 թթ. Բաբելոնի արքա Նուբուզոդոնտոս Բ-ի ավերած տաճարը) մինչև մ. թ. 70 թ. (երբ հռոմեացիներն ավերեցին տաճարը):

գուտ հրեական գրական ժառանգության կորուսյալ մասունքներ գտնելու օժանդակ աղբյուր է եղել («Հայերեն պարականոն գրքերի ուսումնասիրություն» 1, էջ 95), ապա հետագայում նա լրջորեն տարվել է հայագիտությանը, և անգնահատելի է նրա վաստակը հայկական արձանագրությունների, բնագրագիտության, հնագրության, Սուրբ Երկրում հայերի ներկայության պատմության ու հարակից բնագավառների հետազոտության մեջ:

Երկրորդ հատորի «Ձեռագրեր ու տպագրեր» բաժնի հոդվածները նվիրված են հայերեն ձեռագրերի ուսումնասիրման ընդհանուր խնդիրների (էջ 467–476), հայերեն ձեռագրերի հիշատակարաններին (էջ 477–486), դրանցում առկա խառը երկայթազիր-բոլորգիր գրին (էջ 503–528), զանազան հավաքածուներում ու գրադարաններում սփռված չնկարագրված առանձին ձեռագրերի ու տպագիր Աստվածաշնչերի (էջ 529–568) և այլն:

«Բնագրագիտական ուսումնասիրություններ» բաժնի հինգ հոդվածները (էջ 575–630) վերաբերում են ինչպես կոնկրետ տեքստերի, այնպես էլ հրատարակության պատրաստման ընդհանուր հարցերի: Դրանք ունեն նաև մեթոդաբանական նշանակություն. այդպիսին է հատկապես «Տարընթերցումները հայերեն ձեռագրերում և դրանց գնահատման խնդիրը» հոդվածը (էջ 579–589): Այն քննարկում է հայերեն միջնադարյան բնագրերի հրատարակման ընդհանուր սկզբունքներ մշակելու անհրաժեշտությունը:

Երկրորդ հատորի ամենամեծ բաժինն է՝ «Սուրբ Երկիր. ուխտագնացություններ և արձանագրություններ»: «Երուսաղեմի հայկական պատրիարքարանի ձեռագրերի հավաքածուն» հոդվածն (էջ 631–654) ընդհանուր տեղեկություններ է տալիս հայերեն ձեռագրերի ամենահարուստ հավաքածուներից մեկի՝ Երուսաղեմի մատենադարանի մասին: «Թռչուններով և Եվստաթիոսի խճանկարների վերագնահատում» հետաքրքրական հոդվածում (էջ 655–672), խճանկարների մանրամասն վերլուծության հետ, լուսաբանվում են VII դարի կեսերին Երուսաղեմի ոչ հայկական վանքերում հայերի ներկայության հանգամանքները. ի թիվս այլ կարևոր դիտարկումների, նշվում է քաղկեդոնական ու հակաքաղկեդոնական հայերի բարեկամական հարաբերությո-

յունների ուշագրավ փաստը: «Հայերի ուխտագնացությունը Սուրբ Երկիր մինչև արաբական նվաճումները» հոդվածում (էջ 673–690) շեշտվում է հայ ուխտագնացների (որոնց մասին տեղեկություններ կան սկսած IV դարից) բացառիկ մեծ թիվն այլ քրիստոնեական խմբերի համեմատ: Մինչև այժմ գտնված բազմաքանակ հայերեն արձանագրությունների ուսումնասիրություններ են «Նորահայտ հայերեն արձանագրություններ Մինայից» (էջ 697–706), «Մինայի որոշ հայ ուխտավորների հունական կրթությունը և այլ դիտարկումներ» (էջ 707–716), «Մինայի հայերեն արձանագրությունների լեզվին առնչվող հարցեր» (էջ 725–730) և այլ հրապարակումներ:

Մթունը, իհարկե, մանրամասն անդրադարձել է նաև իր հարագատ Երուսաղեմի հայերեն արձանագրություններին (օրինակ՝ «Նորահայտ հայերեն արձանագրություններ Երուսաղեմից», էջ 731–736): «Երուսաղեմ ուխտագնացի հնագույն հայերեն արձանագրությունը» հոդվածում (էջ 737–748) քննարկվում է հետաքրքրական մի իրողություն. Ձիթենյաց լեռան գագաթին և լանջերին գտնված արձանագրությունները վկայում են, որ առաջին հազարամյակի կեսերին այնտեղ հայկական նշանակալից բնակավայր է եղել: «Մի հազվագյուտ հայկական դրամ Երուսաղեմից» հոդվածում (էջ 749–752) նկարագրված է հայտնի Գիդը Լուսինյանի՝ Գիլիկիայի թագավոր Կոստանդին Բ-ի (1342–1344) մի բացառիկ դրամ: «Հայկական երեք առարկա Երուսաղեմից» հոդվածում (էջ 753–760) վերծանված են այդ առարկաների վրա առկա հայերեն արձանագրությունները:

Առանձնակի ուշադրության է արժանի «Նազարեթի հինգերորդ դարի հայերեն արձանագրությունները» հոդվածը (էջ 765–782)՝ նվիրված հայերեն գրի պահպանված հնագույն նմուշներին՝ V դարի առաջին կեսին փորագրված՝ Անանիայի և «Բարզենի» արձանագրություններին: «Նորահայտ հայերեն արձանագրություններ Նազարեթից» հոդվածը (էջ 783–800, Թ. վան Լինտի և Ջ. Նազարյանի հեղինակակցությամբ) 21 արձանագրության վերծանություն ու քննություն է, իսկ «Նորահայտ արձանագրություններ Նորավանքից» հոդվածը (էջ 813–859)՝ 52 արձանագրության:

Ուսումնասիրություններին կցված են ուրակյալ, ընթեռնելի բազմաթիվ լուսանկարներ: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հեղինակն անտարբեր չի անցել իր ճամփորդությունների ընթացքում պատահած որևէ առարկայի վրա փորագրված հայերեն տառերի կողքից, այլ անմիջապես լուսանկարել և հրատարակել է դրանք՝ բանիմաց ու պատշաճ մեկնաբանությամբ:

Մթոունի հողվածները ակադեմիական գուսպ բնույթ ունեն, սակայն դրանցում նա հաճախ չի թաքցնում հայկական ձեռագրերի գեղեցկության ու ճոխության հանդեպ իր հիացմունքը: Ընթերցողից չի կարող վրիպել, թե ինչպես են ժամանակի ընթացքում հայերեն տառերի կրած արտաքին փոփոխությունները գերել գիտնականին և նրա մեջ գուտ մարդկային ու գեղագիտական հետաքրքրություն առաջացրել: Նույնպիսի անմիջականությամբ Մթոունն այլևայլ առիթներով արտահայտում է իր ակնածալից վերաբերմունքը երևելի հայագետ Նորայր արքեպիսկոպոս Պողարյանի ու նրա գիտական վաստակի նկատմամբ:

Երկրորդ հատորն ավարտվում է Մթոունի լիակատար մատենագիտությամբ՝ 52 անուն գիրք, որ նա գրել, կազմել կամ խմբագրել է՝ երբեմն հեղինակակիցների հետ, ևս 6՝ տպագրության ընթացքում գտնվող գիրք, վերջիններիս թվում՝ Դուբլինի Չեսթեր Բիթթի գրադարանի չնկարագրված հայերեն ձեռագրերի ցուցակը (Նիրա Մթոունի հեղինակակցությամբ), եռահատոր «Ադամն ու Եվան հայկական ավանդության մեջ», «Տասներկու պատրիարքների» հայերեն թարգմանության քննա-

կան հրատարակությունը (այս ցուցակում նշված՝ Առաքել Մյունեցու «Ադամգրքի»՝ Մթոունի անգլերեն թարգմանությունն արդեն լույս է ընծայել Օքսֆորդի հանրահայտ հրատարակչությունը), 279 հողված: Գրքի վերջում գետեղված են «Հին աղբյուրների ցանկը», «Անձնանունների և հեղինակների անունների ցանկը», «Նյութերի ցանկը»:

Վաստակաշատ հայագետի հողվածների երկհատոր ժողովածուի հրատարակությունը կարևոր իրադարձություն է հայագիտության բնագավառում: Այն ի մի է բերել բազմաթիվ՝ հաճախ մասնագետներին անհայտ կամ դժվարամատչելի հանդեսներում սփռված հրապարակումներ: Մթոունի աշխատանքը ևս մեկ անգամ վկայում է, որ հայագիտությունը, ինքնուրույն և ինքնաբավ գիտական ոլորտ լինելով հանդերձ, նաև կարող է իր էական նպաստը բերել այլ գրականությունների զանազան խնդիրների մեկնաբանմանը: Վաղուց հայտնի է հայ միջնադարյան թարգմանությունների կարևորությունը որպես արևելաքրիստոնեական՝ հունական ու ասորական մի շարք հուշարձանների հնագույն, իսկ երբեմն նաև՝ միակ պահպանված վկայություն: Այժմ ակնհայտ է դառնում նաև հայկական դպրության՝ հրեական մշակութային ավանդույթների «վկա» լինելու փաստը: Մեկ անգամ ևս համոզվում ենք, որ հայերենի և հայ գրականության իմացությունը կարող է անհրաժեշտ լինել ոչ միայն լավ բյուզանդագետ կամ ասորագետ, այլ որոշ դեպքերում՝ նաև լավ եբրայագետ լինելու համար: